ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 93
25 փետրվար 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 18-Ա և 19-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր՝ **Լ Ե Վ Ո Ն Զ Ա Վ Ա Ր Յ Ա Ն**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 18-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետով և 37-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2019թ. փետրվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները,կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորություններ և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 6-Ա որոշումը՝
Որոշում եմ.

1.Համայնքի զոհված զինծառայողների,զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման,պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
1)Ռուզաննա Շահվերդյան -Աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ
2)Հայկ Քառան -Ահնիձոր գյուղի վարչական ղեկավար, հանձնաժողովի նախագահի տեղակալ
3)Գագիկ Մելիքսեթյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
4)Տիգրան Մխիթարյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
5)Անահիտ Արզումանյան -1-ին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ
6) Նարեկ Քառյան - Աթան գյուղի 2-րդ կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ
7)Արսեն Քոչարան - Շամուտ գյուղի 2-րդ կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ:
2.Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել համայնքապետարանի աշխատակազմ դրանք մուտքագրվելուց հետո մեկամսյա ժամկետում, և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. փետրվարի 23-ի <<Թումանյան համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման համար հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 29-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 19-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշումների պահանջներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ն կողմից չափագրված շինությունների հատակագծերը և <<Ձաղիձորգազ>> ՍՊԸ-ն տնօրեն Մարատ Պետրոսյանի դիմումը՝
որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, Թումանյան քաղաք, 18-րդ փողոց, թիվ 11 հասցեում գտնվող <<Ձաղիձորգազ>> ՍՊԸ-ին 99 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրված (վկայական՝ 2285165 ,կադաստրային ծածկագիր՝ 06-004-057-013) հողամասում 2014թ.ինքնակամ կառուցված 42,4քմ մակերեսով առևտրի սրահը,5,4 քմ մակերեսով բաց պատշգամբը և 3,7 քմ մակերեսով սան.հանգույցը ճանաչել օրինական:
2.Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 51,5 x20000 x 0,035 =36050 (երեսունվեց հազար հիսուն) ՀՀ դրամ:
3.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4.Նշված վճարը անհրաժեշտ է փոխանցել Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին:
5.<<Ձաղիձորգազ>> ՍՊԸ-ին տրամադրել հասցե՝ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 18-րդ փողոց,թիվ 11:
6. Չեղյալ համարել Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. նոյեմբերի 26-ի N 124-Ա որոշումը:
7.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**